Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 771 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 705-Ա
որոշման

«ՆՇԱՆ ԵՎ ԱԻԴԱ ԿԱՐԱՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ, ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՔՈԼԵՋԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Արմավիրի մարզի Փարաքար համայնքում կառուցել Նշան և Աիդա Կարայանների անվան արհեստների, արվեստների և տեխնոլոգիաների քոլեջ, որտեղ Փարաքար համայնքի և այլ մարզերի երիտասարդները հնարավորություն կունենան ստանալ խորը ինժեներական և տեխնոլոգիական գիտելիքներ, թվային արհեստների և արվեստների ոլորտի հմտություններ, կներգրավվեն արտադրական աշխատանքներում: Շինարարական աշխատանքների ավարտից անմիջապես հետո Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ նախատեսվում է լիցենզավորում՝ Հայաստանի Հանրապետությունում առաջին նմանատիպ միջին մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնելու համար: Նորաստեղծ հաստատության յուրահատկությունը կայանում է նրանում, որ բոլոր մասնագիտացումներում պարտադիր է լինելու թվային հմտությունների կիրառումը բոլոր ոչ թվային ոլորտներում: Քոլեջի նեղ մասնագիտական ուղղություններն են լինելու՝ 1) խորը ինժեներական ուղղություն. 2) թվային արհեստ և արվեստ:

		Հանգստյան օրերին քոլեջ են հաճախելու աշակերտներ բոլոր մարզերից՝ համատեղ թիմային աշխատանք իրականացնելու, մենթորների օգնությամբ տեխնոլոգիական արտադրանքներ ստեղծելու նպատակով: Քոլեջում անվճար կրթություն կստանան Փարաքար համայնքի անապահով ընտանիքների անդամները, պատերազմի մասնակիցները, միայնակ մայրերը, սահմանամերձ մարզերի անապահով ընտանիքների երեխաները: Շաբաթ և կիրակի օրերին բոլոր մարզերի երիտասարդների համար համատեղ թիմային աշխատանքներն ու արտադրական մենթորությունը կիրականացվի անվճար հիմունքներով: Քոլեջի գլխավոր առաքելությունը կլինի միջմարզային համագործակցությունն ու երիտասարդների համախմբումը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի անվան» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Պռոշյան 2/1, տարածք 18, ՀՎՀՀ՝ 00240464)
4.	Ծրագիրը կատարողը	«Նշան և Աիդա Կարայանների անվան» Փարաքարի կրթական հիմնադրամ (Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Ի. Գասպարյան փողոց 2, ՀՎՀՀ՝ 04445077)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ, Փարաքար խոշորացված համայնք, կրթության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	490,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար խոշորացված համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) քոլեջի շենքի կառուցում՝ 186,925,396 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2024 թվականի մարտի 1-ը. 2) ներքին ինժեներական ցանցերի և համակարգերի կառուցում՝ 58,194,308 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը.

		3) շենքի արտաքին և ներքին հարդարում՝ 244,880,296 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) քոլեջի շենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 186,925,396 դրամ առանց ավելացված արժեքի հարկի. 2) ներքին ինժեներական ցանցերի և համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, օդափոխության, օդորակման, ջրամատակարարման և ջրահեռացման) կառուցման աշխատանքների իրականացում՝ 58,194,308 դրամ առանց ավելացված արժեքի հարկի. 3) շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 244,880,296 դրամ առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Փարաքարի համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ